

դասակարգվել են հինգ խմբի՝ 0%, 10%, 20%, 50% եւ 100% ռիսկի աստիճանով: Ընդ որում՝ Բազեյան կոմիտեն հիմնականում դիտարկել է վարկային ռիսկը եւ մասամբ՝ երկրային ռիսկը: Հաշվի առնելով, որ Եվրոպական Միության անդամ երկրները առաջ են քաշել իրենց կառավարությունների եւ կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջների հավասար մոտեցման սկզբունքը՝ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրների կառավարությունների ու կենտրոնական բանկերի պահանջների նկատմամբ սահմանվել է ռիսկի գրոյական աստիճան: Իսկ այլ երկրների կառավարությունների եւ կենտրոնական բանկերի նկատմամբ ռիսկը գնահատվել է որպես գրոյական միայն այն դեպքում, եթե պահանջներն ու պարտավորությունները արտահայտված են ազգային արժույթով, քանի որ այս դեպքում բացառվում է արժույթային ռիսկը:

Պետք է նշել, որ կառավարությունից ցածր մակարդակի պետական մարմինների նկատմամբ պահանջների ռիսկի աստիճանի սահմանումը Բազեյան կոմիտեն վերապահել է բանկային վերահսկողության ազգային մարմիններին՝ 0, 10, 20 եւ 50 տոկոսի շրջանակներում, իսկ պետական եւ ոչ պետական առեւտրային կազմակերպությունների համար սահմանվել է ռիսկի միեւնույն գործակից՝ 100%-ի չափով:

Ռիսկերի կշռման համակարգում գրավի հաշվառման խնդիրները դուրս չեն մնացել Բազեյան կոմիտեի ուշադրությունից, պարզապես այստեղ առկա են էական բարդություններ: Խոսքը վերաբերում է գրավի վերաբերյալ միասնական օրենսդրության բացակայությանը, ինչն էլ խոչընդոտում է ռիսկերի կշռման համակարգում գրավի հաշվառման միասնական մոտեցման ընդունումը: Որոշվել է միայն կանխիկ դրամական միջոցների կամ ՏՀԶԿ անդամ-երկրների կառավարությունների թողարկած արժեթղթերի տեսքով գրավների ռիսկը, որն ընդունվել է 0%:

1990-ականների սկզբից ուշադրություն է դարձվել նաեւ խոշոր վարկերի ռիսկերի դիտարկման եւ հսկողության մեթոդների միասնականացման հարցերին: Այս հարցը քննարկվել է 1990թ. հոկտեմբերին բանկային վերահսկողության հարցերով միջազգային համաժողովում Բազեյան կոմիտեի զեկույցի հիման վրա, որի արդյունքում որոշվել է սահմանափակել մեկ մասնավոր ոչ բանկային փոխառուի գծով ռիսկի մեծությունը՝ բանկի կապիտալի 10-40%-ի սահմաններում, հատուկ ուշադրություն դարձնելով փոխկապակցված վարկառուներին տրվող վարկերին: Նշված զեկույցի հիման վրա համաժողովի մասնակիցների մշակած գործնական առաջարկները 1991թ. ընդունվեցին Բազեյան կոմիտեի կողմից, եւ սահմանվեց, որ մեկ փոխառուի գծով ռիսկը չպետք է գերազանցի բանկի կապիտալի 25%-ը: Այս սահմանափակումը տարածվել է ոչ միայն վարկերի, այլեւ այն հաշվեկշռային եւ արտահաշվեկշռային գործառնությունների վրա, որոնց գծով գոյություն ունի չվճարումների ռիսկ:

Վերը նշվածով հանդերձ՝ վարկային ռիսկերի քանակական սահմանափակումները՝ առանց վարկային պորտֆելի հսկողության այլ եղանակների կիրառման, կարող են բերել այդ սահմանափակումները չգերազանցող վարկերի ռիսկայնության թերազնափաստման: Այդ իսկ պատճառով Բազեյան կոմիտեն, քանակական սահմանափակումներից բացի, կարելու է ազգային մարմինների կողմից բանկերի նկատմամբ վերահսկողությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Բազեյան կոմիտեն ուշադրություն է դարձրել նաեւ արժույթային, տոկոսադրույքային ռիսկերի արտացոլման վրա: Այս ռիսկերի նշանակությունը բանկերի համար աճում է արժեթղթերի շուկայում բանկերի ակտիվացման եւ ֆինանսական նոր գործիքների կիրառման պայմաններում: Նշված ռիսկերի հաշվառման հիմնահարցը մասնակի լուծվել է Բազեյան համաձայնագրում: Այսպես, ամրագրված տոկոսադրույքով պետական արժեթղթերում ներդրումների ռիսկը հաշվի առնելու համար բանկային վերահսկողության ազգային մարմիններին առաջարկվել է գրոյական գործակցի փոխարեն կիրառել 10% կշիռ՝ մինչեւ մեկ տարի մարման ժամկետ եւ 20%՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետ ունեցող արժեթղթերի համար:

Հատուկ մոտեցում է պահանջվել տոկոսադրույքների եւ արտարժույթի փոխարժեքների հետ կապված դիրքերի համար: Այդ ուղղությամբ ձեռավորվել է երկու մոտեցում: Առաջինի դեպքում գործառնության անվանական ծավալը բազմապատկվում է տոկոսային կշռով՝ հաշվի առնելով մարման ժամկետը: Երկրորդ դեպքում ռիսկը կապվում է շուկայի հետ՝ պարտավորության փոխակերպման ընթացիկ արժեքին գումարելով մինչեւ պարտավորության ժամկետի լրանալը հնարավոր ռիսկը:

Բանկային ռիսկերի նվազեցման առումով շատ կարեւոր է կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների սահմանային հարաբերակցության ցուցանիշը, որի միջանկյալ մեծությունը մինչեւ 1991թ. սահմանվել է 7.25%, ընդ որում՝ կապիտալի առնվազն կեսը պետք է բաղկացած լինի հիմնական կապիտալից: Սակայն մինչեւ 1992թ. վերջը թույլատրվել է հիմնական կապիտալի կազմում հաշվառել լրացուցիչ կապիտալի տարրեր՝ 10%-ի սահմաններում: Դա նշանակում է, որ հիմնական կապիտալի նվազագույն հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին պետք է կազմեր 3.6%, այդ թվում՝ զուտ հիմնական կապիտալի տարրերի հարաբերակցությունը՝ 3.25%:

1993թ. հունվարի 1-ից սահմանվել է նշված հարաբերակցության նվազագույն մեծությունը՝ 8%, այդ թվում՝ հիմնական կապիտալի հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին՝ 4%: Սահմանվել է նաեւ լրացուցիչ կապիտալի բաժինն ընդհանուր կապիտալում՝ հիմնական կապիտալի 50%-ի չափով:

Անհրաժեշտ է նշել, որ թեեւ Բազեյան համաձայնագրի դրույթներին անցումը պետք է կատարվեր մինչեւ 1993թ., արդեն 1990թ. վերջին համաձայնագրի դրույթները կարածվել են հիմնական ֆինանսական կենտրոններում (ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Կանադայում, Շվեյցարիայում, Ըվեդիայում): Բազեյան համաձայնագրի դրույթները արտացոլում են գտել այդ երկրների ազգային օրենսդրություններում եւ բանկային հսկողության մարմինների նորմատիվ ակտերում: Որոշ երկրներում (ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Շվեյցարիայում) սահմանվել են Բազեյան համաձայնագրով նախատեսվածից ավելի խիստ պահանջներ՝ կապիտալի կառուցվածքի նկատմամբ, իսկ մի շարք երկրներ էլ միանգամից սահմանել են նորմատիվի ոչ թե միջանկյալ, այլ վերջնական մեծությունը:

Բազեյան համաձայնագրի գործողության սկզբնական շրջանում բանկերը սկսել են մեծացնել սեփական կապիտալը՝ չբաշխված կապիտալի եւ նոր բաժնետոմսերի թողարկման հաշվին: Այսպես, Ճապոնիայի՝ կապիտալի համարժեքության ավանդաբար ցածր գործակիցներ ունեցող բանկերը 1987-89թթ. ընթացքում բաժնետոմսերի թողարկման հաշվին ներգրավվել են մոտ 6 տրլն իեն կապիտալ: Նույն ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի խոշոր բանկերը ներգրավել են 4 մլրդ ֆունտ ստերլինգի կապիտալ: Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի բանկերն իրենց կապիտալները մեծացրել են համապատասխանաբար՝ 25, 19 եւ 12 տոկոսով:

1990թ. արժեթղթերի շուկայի ակտիվության նվազման, Էժան միջոցների աղբյուրների բացակայության եւ «չաշխատող» (ոչ եկամտաբեր) ակտիվների ծավալների մեծացման պատճառով էականորեն նվազեց բանկերի շահութաբերությունը, եւ էապես դանդաղեց բանկերի հիմնական կապիտալի աճը: Այս պայմաններում բանկերը սկսեցին սահմանափակել իրենց ակտիվների, հատկապես՝ բարձր ռիսկային ակտիվների աճը եւ ձեռնարկեցին ստորադաս պարտավորությունների թողարկումը: Բարձրացվեցին վարկառուների ֆինանսական վիճակի նկատմամբ պահանջները, եւ վերանայվեց տոկոսադրույքային քաղաքականությունը:

Այսպիսով՝ նշված ռազմավարությունը բերեց մասնավոր վարկառուների վարկավորման տոկոսադրույքների բարձրացման եւ զարգացող երկրներին տրամադրված վարկերի պորտֆելի վերանայման: Չնայած ֆոնդային շուկաների անբարենպաստ կոնյունկտուրային, որը բացասաբար է անդրադարձել լրացուցիչ կապիտալի մեծության վրա, 1990թ. վերջին զարգացած երկրների բանկերը հասան կամ գերազանցեցին 7.25% միջանկյալ ստանդարտները: Ընդ որում՝ միջազգային խոշոր

բանկերի մեծ մասը հասավ 8% ստանդարտի վերջնական մեծությամբ:

Կապիտալի համարժեքության նորմատիվներն արդյունք են երկու հակադիր ուժերի ներգործության: Մի կողմից՝ պետական կարգավորման եւ հսկողության մարմինները շահագրգիռ են սահմանել բարձր նորմատիվներ, որոնց միջոցով ապահովվում են բանկերի ավանդատուների ու պարտատերերի շահերը, եւ նվազում է կարգավորիչ ներգործության անհրաժեշտությունը անբարենպաստ իրադարձությունների դեպքում: Այսպես, ԱՄՆ-ում 1980-ականների սկզբին տեղի ունեցած բանկային համակարգի ճգնաժամը պայմանավորված էր երկու փոխկապված պատճառներով՝ կապիտալի անբավարարությամբ եւ կարգավորման աստիճանի իջեցմամբ: 1978թ., երբ ԱՄՆ-ում սկսվել էր բանկային համակարգի ապակարգավորումը, խնայողական բանկերի կապիտալի հարաբերությունը ակտիվներին կազմում էր 3%: Ակտիվների որակը բարձր էր, քանի որ դրանց կազմում գերակշռում էին ամրագրված տոկոսադրույքով անշարժ գույքի գրավագիրները եւ զանազան պարտատոմսերը: Բանկերի տոկոսային ռիսկը նվազագույնն էր, քանի որ ավանդների տոկոսադրույքը սահմանափակված էր Ֆեդերալ ռեզերվային համակարգի կողմից: Երբ վերացվեց այս սահմանափակումը, եւ բարձրացավ ավանդների տոկոսադրույքը, բանկերը ստիպված եղան վաճառել հին ակտիվները՝ կրելով վնասներ, որոնք 1981-83թթ. կազմեցին ակտիվների 3%-ը: Ուստի՝ կապիտալի համարժեքությունը պահպանելու համար խնայողական բանկերը պարտավոր էին կապիտալի եւ ակտիվների հարաբերությունը պահպանել առնվազն 6%-ի չափով:

Մյուս կողմից՝ բանկի բաժնետերերը շահագրգիռ են պահպանել կապիտալի նվազագույն չափը՝ ապահովելով բավարար շահույթի ստացումը՝ առանց լրացուցիչ ռիսկի: Սեփական եւ փոխառու միջոցների հարաբերակցության (լեւերեջի) փոփոխությունը՝ հոգևոր սեփական միջոցների, նվազեցնում է բանկի մրցունակությունը ֆինանսական շուկայում: Զանկի որ կապիտալը դիտվում է որպես պաշտպանություն՝ ակտիվների որակի վատթարացման դեպքում այդ ակտիվներում տեղաբաշխված ռեպոզիտների համար, յուրաքանչյուր նոր վարկի տրամադրման կամ ներդրման համար բանկը կապիտալի համարժեքությունը պահպանելու նպատակով ստիպված է նույն չափով լրացնել սեփական կապիտալը: Այս լրացման արժեքը գումարվում է ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսներին եւ դրանց կառավարման ոչ տոկոսային ծախսերին: Ուստի՝ միջին մակարդակից ցածր կապիտալ ունեցող բանկերը մրցակցային առավելություն ունեն կապիտալի համարժեքության բարձր մակարդակ ապահովող բանկերի նկատմամբ: Զանկի որ բանկի բաժնետերերը ենթակա են ավելի բարձր ռիսկի, քան ավանդատուները եւ պարտատերերը, նրանց ստացած փոփոխառուցումը պետք է լինի ավելի բարձր, այսինքն՝ բանկի համար կապիտալը ֆինանսավորման բավական թանկ աղբյուր է: Կապիտալի համարժեքության բարձր մակարդակ ունեցող բանկերը բաժնետերերին ընդունելի եկամուտ ապահովելու նպատակով ստիպված են բարձրացնել վարկավորման տոկոսարդյունքները եւ ծառայությունների սակագները:

Անհրաժեշտ է նշել, որ Բազելյան համաձայնագրի դրույթների մշակումը եւ կիրառումը միակը չէին այդ ժամանակաշրջանում: 1980-ականների վերջին համանման նախաձեռնություններ իրականացրեց նաեւ Եվրամիությունը՝ այն տարբերությամբ, որ Բազելյան կոմիտեի մշակած կանոնները վերաբերում էին հիմնականում միջազգային գործառնություններ իրականացնող բանկերին, իսկ Եվրամիության դիրեկտիվները՝ վարկային եւ ներդրումային հաստատություններին:

1989թ. Եվրամիությունն ընդունել է երեք կարեւոր դիրեկտիվներ՝ սեփական միջոցների, վճարունակության ցուցանիշների եւ բանկային գործունեության կորորինացման մասին: Այդ դիրեկտիվների դրույթները ուժի մեջ են մտել 1993թ. հունվարից: Առաջին երկուսը սահմանում են կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջներ եւ հիմնականում համընկ-

նում են Բազելյան համաձայնագրի դրույթների հետ: Սեփական միջոցների մասին դիրեկտիվը հաստատել է կապիտալի ստանդարտ սահմանումը վարկային բոլոր հաստատությունների համար: Վճարունակության ցուցանիշների մասին դիրեկտիվում սահմանվել են վճարունակության նկատմամբ միասնական մոտեցում, անվճարունակության ռիսկերի կշիռներ, ապահովվածության եւ երաշխիքի միասնական կանոններ: Բանկային գործունեության կարգավորման մասին դիրեկտիվը միասնականացրել է բանկային գործառնությունների կանոնները եւ Եվրամիության մեկ երկրում արտոնագիր ստացած հաստատություններին թույլատրել է գործունեություն ծավալել ԵՄ անդամ բոլոր երկրներում:

Բանկային գործունեության կարգավորման սկզբունքորեն նոր մոտեցում է 2001թ. ընդունված Բազելյան նոր հիմնական համաձայնագիրը, որը ներառում է երեք հիմնական բաժիններ՝ նվազագույն կապիտալի պահանջներ, վերահսկողության գործընթացի բնութագիր եւ շուկայական կարգապահություն:

Բազելյան նոր համաձայնագիրը նախորդից էականորեն տարբերվում է ընձեռնած հնարավորություններով: Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ Բազել 2-ը շեշտադրումը կատարում է ռիսկերի կառավարման եւ ռիսկերի գնահատման գործընթացի վրա, եւ չնայած այդ ոլորտը երբեք անուշադրության չի մատնվել Բազելյան կոմիտեի կողմից, այժմ այն դարձել է Նոր Զամաձայնագրի հիմնասյունը: Նոր Զամաձայնագրով առաջարկվում է կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկման մի քանի տարբերակ, ինչը բանկերին հնարավորություն է տալիս ընտրել այն տարբերակը, որն առավելագույնս համապատասխանում է ռիսկերի կառավարման իր գործող համակարգին: Այսպես, տարբերակներից մեկը, որը համապատասխանում է նախորդ համաձայնագրով նախատեսված տարբերակին, վարկային ռիսկի գնահատման ստանդարտացված տարբերակն է, որի համաձայն՝ բանկի ակտիվները կշռվում են ըստ ռիսկայնության աստիճանի: Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվող՝ վարկային ռիսկի գնահատման մեկ այլ տարբերակ է ներքին գնահատումների վրա հիմնված մոտեցումը: Ըստ այս մոտեցման՝ բանկերը կարող են գնահատել վարկային ռիսկը իրենց վարկային պորտֆելում՝ հիմք ընդունելով իրենց ներքին չափանիշները, եւ վարկերի առանձին տեսակների վերլուծության համար կկիրառվեն անհատական համակարգեր, որպես օրինակ՝ կարող են առանձնացվել կազմակերպություններին եւ անհատներին տրամադրված վարկերը: Ըստ ներքին գնահատումների վրա հիմնված մոտեցման՝ բանկը գնահատում է յուրաքանչյուր վարկառուի վճարունակությունը, ինչի արդյունքում բացահայտվում է ապագայում հնարավոր կորուստների չափը, որը եւ կազմավորում է կապիտալի նվազագույն չափը:

Բազելյան նոր համաձայնագիրն առաջարկում է կապիտալի համարժեքության նորմատիվ՝ նաեւ գործառնական ռիսկի համար, սակայն գործառնական ռիսկի գնահատման մոտեցումները դեռեւս վերջնականապես չեն տրվել եւ ներկայումս զարգացման փուլում են:

Բազելյան կոմիտեն մեծ նշանակություն է տալիս նաեւ վերահսկող մարմիններին, որոնք պետք է մշտապես հետեւեն բանկերի կողմից ռիսկերի լիարժեք գնահատմանը եւ կապիտալի համարժեքության նորմատիվների կատարմանը: Նոր համաձայնագրով հատկապես կարեւորվել է այն հանգամանքը, թե որքանով են բանկի ռիսկերը համապատասխանեցված բանկի կապիտալին, իսկ այդ համապատասխանության գնահատման գործընթացում էլ հենց կարեւորվում են վերահսկող մարմինները:

Անհրաժեշտ է նշել, որ թեեւ Բազելյան նոր հիմնական համաձայնագիրը պարունակում է որոշ բարդություններ եւ նորա-նոր հարցեր առաջացնում, այն առավել ճկուն է ռիսկերի նկատմամբ եւ հնարավորինս հարմարեցված է արագ զարգացող բանկային համակարգի պահանջներին: Ուստի՝ Նոր համաձայնագրին անցումը, որը պետք է կատարվի 2004թ., անհրաժեշտություն է այն երկրների համար, որոնք ձգտում են

ստեղծել առավել կայուն բանկային համակարգ՝ ինտեգրված համաշխարհային բանկային համակարգին:

Կապիտալի համարժեքության H₁ նորմատիվը՝ սեփական միջոցների հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին, տարբերակված է ըստ կապիտալի չափերի՝ հետեյալ կերպ՝ 2000թ. հունվարի 1-5 մլն EURO եւ բարձր կապիտալ ունեցող բանկերի համար նորմատիվը սահմանված է 10%, իսկ 1-ից 5 մլն. EURO կապիտալի դեպքում՝ 11%: Բացի այդ, նորաստեղծ բանկերի համար, որոնց գրանցման պահից անցել է 6 ամիս, H₁ նորմատիվի նվազագույն մեծությունը սահմանված է 8%-ի չափով:

Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի սահմանափակ մյուս խումբ նորմատիվները՝ իրացվելիության նորմատիվները, հետեյալն են.

- ✓ ընթացիկ իրացվելիության նորմատիվ (H₂),
- ✓ ակնթարթային իրացվելիության նորմատիվ (H₃),
- ✓ երկարատեւ իրացվելիության նորմատիվ (H₄),
- ✓ ընդհանուր իրացվելիության նորմատիվ (H₅),
- ✓ թանկարժեք մետաղներով գործառնությունների նորմատիվ (H₆):

Ընթացիկ իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես իրացվելի ակտիվների՝ բարձր իրացվելի ակտիվների եւ մինչեւ 30 օր ժամկետով տրամադրված օվերդրաֆտի, վարկերի, մուրհակների եւ բանկերում տեղաբաշխված դեպոզիտների գումարների հարաբերություն բանկի ցպահանջ եւ մինչեւ 30 օր մարման ժամկետով պարտավորություններին: Այս նորմատիվի նվազագույն թույլատրելի մեծությունը 1999թ. փետրվարի 1-ից սահմանվել է 70%-ի չափով:

Ակնթարթային իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես բարձր իրացվելի ակտիվների՝ կանխիկ դրամական միջոցների, թանկարժեք մետաղների եւ քարերի, «նոստրո» թղթակցային հաշիվների, ցպահանջ տեղաբաշխված միջոցների, ցպահանջ մուրհակների, պետական արժեթղթերում ներդրումների հարաբերություն բանկի ցպահանջ պարտավորություններին: Այս նորմատիվի նվազագույն մեծությունը ներկա պահին կազմում է 20%:

Երկարատեւ իրացվելիության նորմատիվը իրենից ներկայացնում է մեկ տարուց ավելի մարման ժամկետ ունեցող վարկերի, արժեթղթերի, դեպոզիտների, ինչպես նաեւ մեկ տարուց ավելի ժամկետով տրված երաշխիքների 50%-ի գումարի հարաբերություն մարման նույն ժամկետ ունեցող բանկի պարտավորությունների եւ բանկի սեփական միջոցների (կապիտալի) գումարներին: Այս նորմատիվի առավելագույն թույլատրելի մեծությունը սահմանվում է 120%-ի չափով:

Ընդհանուր իրացվելիության նորմատիվը որոշվում է որպես իրացվելի ակտիվների հարաբերակցություն բանկի ակտիվներին, որոնց գումարից հանվում են բանկի ետ գնած սեփական բաժնետնային ժամկետանց տոկոսների, միջմասնաճյուղային հաշվարկների Կենտրոնական բանկում տարանցիկ հաշիվների փոխանցված պետական քյուլջեի եկամուտների վերագնահատման պահուստների, վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի փաստացի ձեւավորված եւ հաշվարկային մեծությունների տարբերության, բանկի ծախսերի, վնասների, օգտագործված շահույթի, մուրհակների գծով տոկոսների գումարները: 1997թ. փետրվարի 1-ից այս նորմատիվը սահմանվել է 20%-ի չափով: Այս նորմատիվը ցույց է տալիս, թե որքան պետք է կազմի իրացվելի ակտիվների բաժինն ընդհանուր ակտիվներում, որպեսզի միաժամանակ ապահովվի թե՛ բանկի հաշվեկշռի իրացվելիության անհրաժեշտ մակարդակը, թե՛ բանկի եկամտաբերությունը ակտիվային գործառնությունների գծով:

Թանկարժեք մետաղներով գործառնությունների գծով իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես թանկարժեք մետաղների ձեւով բանկի բարձր իրացվելի ակտիվների հարաբերություն թանկարժեք մետաղներով բանկի ցպահանջ եւ մինչեւ 30 օր մարման ժամկետ ունեցող պարտավորություններին: Այս նորմատիվի նվազագույն թույլատրելի մեծությունը կազմում է 10%:

Իրացվելիության նշված նորմատիվներից 33 կենտրոնական բանկը սահմանել է երկուսը՝ բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների նվազագույն սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն) եւ բարձր իրացվելի ու ընդհանուր ակտիվների սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն):

Վարկային ռիսկի կառավարման նպատակով Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը սահմանում է չորս տնտեսական նորմատիվներ.

- ✓ մեկ փոխառուի (փոխկապակցված փոխառուների) գծով ռիսկի առավելագույն չափը (H₇),
- ✓ խոշոր վարկային ռիսկերի առավելագույն չափը (H₇),
- ✓ բաժնետեր-փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (H₈),
- ✓ բանկի ինսայդերներին տրամադրված վարկերի, փոխառվությունների, երաշխիքների եւ երաշխավորությունների առավելագույն չափը (H₉):

H₇ նորմատիվի առավելագույն չափը սահմանված է 25%-ի չափով: Խոշոր ռիսկ է համարվում բանկի սեփական միջոցների 5%-ը գերազանցող վարկերի տրամադրումը: Խոշոր վարկերի ընդհանուր գումարը 1998 թվականից չի կարող բանկի կապիտալը գերազանցել ավելի քան 8 անգամ:

Բաժնետեր-փոխառուներին տրամադրված վարկերի ռիսկը (H₈ նորմատիվը) սահմանափակված է բանկի կապիտալի 20%-ի չափով, ընդ որում՝ բանկի բաժնետերերին տրված վարկերի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել բանկի կապիտալի 50%-ը:

Ավելի խիստ սահմանափակումներ են գործում բանկի ինսայդերներին տրված վարկերի գծով. H₉ նորմատիվի առավելագույն մեծությունը սահմանվել է կապիտալի 2%-ի չափով, իսկ ինսայդերներին տրված վարկերի ընդհանուր գումարը չի գերազանցել բանկի կապիտալի 3%-ը:

Ռուսաստանի Դաշնությունում բանկային համակարգի կառավարման նորմատիվային դաշտի կարելու առանձնահատկություններից է բանկերի պարտավորությունների նորմատիվային կարգավորման լայն համակարգի առկայությունը: Դա իրականացվում է տնտեսական հետեյալ նորմատիվների միջոցով.

- ✓ սեփական մուրհակային պարտավորությունների ռիսկը (H₁₀),
- ✓ բնակչությունից ներգրավված միջոցների միջոցների առավելագույն չափը (H₁₁),
- ✓ մեկ վարկատուի (ավանդատուի) գծով ռիսկի առավելագույն չափը (H₁₂):

Բանկի սեփական մուրհակային պարտավորությունների ռիսկը չի կարող գերազանցել բանկի կապիտալի 100%-ը: Նույնպիսի սահմանափակում է գործում նաեւ բնակչությունից ներգրավված միջոցների գծով: Մեկ վարկատուի (ավանդատուի) գծով ռիսկի առավելագույն չափը սահմանվում է 25%-ի չափով, այսինքն՝ հավասար է մեկ փոխառուի գծով ռիսկի նորմատիվին:

Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգի նորմատիվային կարգավորման առանձնահատկություններից է նաեւ բանկերի ներդրումային գործունեության սահմանափակումը: Այսպես, բանկի՝ իրավաբանական այլ անձանց բաժնետնային (բաժնետոմսերում) ներդրումների առավելագույն չափը (H₁₂ նորմատիվը) չի կարող գերազանցել բանկի կապիտալի 10%-ը:

1. http://ru.wikipedia.org/wiki/Базель_II
 2. <http://www.cbr.ru/today/pk/Basel.pdf>

3. Балтрон Крис Дж., МакНортон Диана, Банковские учреждения в развивающихся странах, Том 2, Пер. с англ., Всемирный Банк, Вашингтон 1994, с. 211-213.

4. Банковское дело и финансирование инвестиций (под ред. Н. Брука), Том 2, Часть 2, Пер. с англ., Всемирный Банк, Вашингтон 1995, с. 474.

5. Frederic S. Mishkin, The economics of money, banking and financial markets, Columbia University, 1998, p. 301.

6. Борискин А.В. и др., Деньги, кредит, банки, с. 120.